ԷԴՈՒԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄՄ

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ՝ ԸՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ

ԺԸ. դարավերջին Ղարաբաղի մահմեդական իշխանությունների կողմից սանձազերծած ահաբեկումների եւ ունեցվածքի բռնագրավման արդյունքում հայ մելիքական տներն ու նրանց ենթակա հայ բնակչությունը ճարահատյալ լքեցին հայրենի եզրերն ու ապաստան գտան հարեւան Վրաստանում: Եվ թեպետ պատմագիտական տեսանկյունից այս իրողությունը բազմիցս քննարկվել եւ վերլուծության է ենթարկվել, սակայն հայ մելիքների՝ Ղարաբաղից հեռանալու փաստը ներկայումս շահարկվում է մեր հարեւան երկրի պատմաբանների կողմից, թե իբր հայ մելիքներն իրենց կամքով են լքել Ղարաբաղը կամ տուրք են տվել ռուսական իշխանությունների գայթակղիչ առաջարկներին: Ավելին՝ վերջիններս շահարկում են Ղարաբաղում մահմեդական բնակչության թվաքանակի գերազանցությունը հայկական բնակչության հանդեպ: Ուստի, մեր հարեւան երկրի պատմաբանների կողմից այս խեղաթյուրումներին կարելի է հակադարձել միայն օտար աղբյուրների արխիվային վավերագրերի վկայակոչմամբ: Այս առնչությամբ Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի կողմից հրատարակած վավերագրերը (խոսքը նշանավոր «АКАК»-ի մասին է[1]՝ Է. Հ.) լուրջ փաստեր են ներկայացնում հայ մելիքների՝ հարեւան Վրաստանում ապաստան գտնելու բուն պատճառների, ինչպես նաեւ ԺԸ.-ԺԹ. դարերում Ղարաբաղում հայ բնակչության թվաքանակի հարցը պարզաբանելու համար:

Առաջին ուշագրավ փաստաթուղթը, որն անմիջականորեն վերաբերում է քննության առարկա հարցին, զետեղված է ժողովածուի անդրանիկ հատորում. Գանձասարի Սարգիս եպիսկոպոսի[2] նամակն է՝ ուղղված կառավարչապետ Կ. Ֆ. Կնորինգին՝ 1801 թ. մայիսի 29-ին: Այնտեղ մասնավորապես ասվում է. «1781 թ. մեծ իշխան Պոտյոմկինը եւ Հովսեփ ար-

---

[1] «Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրեր» ժողովածուն ներառում է ստվարածավալ 13 հատոր (էջերի ընդհանուր ծավալն անցնում է 13500-ը): Հրատարակվել է 1866-1904 թթ. նշանավոր կովկասագետ Ա. Բերժեի խմբագրությամբ: Գիտական շրջանակներում առավելապես հայտնի է АКАК (Акты археографической комиссии Кавказа) անվամբ:

[2] Հետագայում կաթողիկոս՝ Սարգիս Բ. Գանձասարեցի (1810-1828 թթ.):

քեպիսկոպոս Արղությանը նամակ ուղարկեցին Ղարաբաղի մելիքներին եւ հարյուրապետներին այն բովանդակությամբ, որ Նորին Մեծություն կայսրուհու բարի կամքը տարածվում է հայ ժողովրդի ու Ղարաբաղի մելիքների եւ հարյուրապետների վրա: Նամակը ստանալուն պես մելիքներ Ադամ Իսրայելովը, Աբովը, Հովսեփը եւ Դանիել Մելիքբեկովը՝ իմ եղբայրը, հավաքվեցին Հովհաննես կաթողիկոսի մոտ եւ նույն թվականի դեկտեմբերին խնդրանքով դիմեցին Նորին Մեծություն կայսրուհուն, մեծ իշխան Պոտյոմկինին եւ Հովսեփ արքեպիսկոպոսին... Պատասխանն ստացվեց 1782 թ. հունիսին: Այդ ընթացքում մելիք Ադամ Իսրայելովը մահացավ, իսկ Աբովը, Հովսեփը, Արմովը Մելիքբեկով Դանիելի եւ Գաբրիելի միջոցով երկրորդ անգամ նամակ ուղարկեցին կայսրուհուն»[3]*:*

Ինչպես նկատում ենք, Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերում ներկայացված այս փաստաթուղթը առաջին հերթին հաստատում է Ղարաբաղի մելիքների՝ հայրենի երկրում ապրելու անհնարինությունը եւ որ դրա պատճառը տեղի մահմեդական իշխանությունն էր՝ Իբրահիմ խանի գլխավորությամբ: Բնականաբար, Իբրահիմ խանը չէր կարող հանդուրժել հայ մելիքների նման հանդգնությունը՝ առանց իրեն տեղյակ պահելու քաղաքական ընույթի ձեռնարկը. «1784 թ. նոյեմբերի 5-ին չարագործ Իբրահիմ խանը, տեղեկանալով այս մասին, - այնուհետեւ գրում է Սարգիս եպիսկոպոսը, - սկսեց հարցաքննել իմ եղբայր Հովհաննես կաթողիկոսին եւ հիշյալ մելիքներին ու հարյուրապետներին... մեղադրելով կաթողիկոսին, որ հայ ժողովրդին վերաբերող քայլը ձեռնարկել է առանց իրեն տեղեկացնելու՝ մահապատժի ենթարկեց նրան: Վերջինիս մահից հետո ինձ եւ իմ եղբորը՝ մելիք Դանիելին, եւ մյուս երեք եղբայրներիս ձերբակալեց եւ ինն ամիս պահեց Շուշիի բերդում: Գանձասարի վանքը, իմ եղբայրների ունեցվածքը... նա եւս բռնագրավեց: Նույնը կատարվեց նաեւ մելիք Բախտամի հետ, որի որդին այժմ գտնվում է Շուշիում»[4]*:*

Սակայն դրանով չի ավարտվել Ղարաբաղի խանի դաժանությունը. «Չարագործ Իբրահիմ խանը, դրանով չբավարարվելով, խլեց կաթողիկոսությունը, որը պատկանում էր մեզ՝ Նադիր Շահի ֆերմանի համաձայն... Մեզ բաժին հասած այս ճնշումներից հետո մելիքներ Մեջլումն ու Աբովը Ղարաբաղից հեռացան եւ ապաստան գտան հանգուցյալ Գեորգի թագա-

---

[3] “Акты археографической комиссии Кавказа” (այսուհետ՝ АКАК), т. I, Документ 883. Прошение, поданное ген.-л. Кнорингу епископосом Саркисом Гандзасарским, от 29-го мая 1801 года, Тифлис, 1866, том I, с. 638.

[4] АКАК.

վորի մոտ... Աստված նրա հետ. Նորին Մեծությունը մեզ շատ լավ ընդունեց՝ տալով Հաղպատի վանքը, իսկ Էջմիածնի կաթողիկոսի թույլտվությամբ ես նշանակվեցի եպիսկոպոս, սակայն իմ եղբայր մելիք Դանիելի եւ իմ եղբոր որդի Աստվածատուրի կյանքը վտանգված է. նրանք գտնվում են ծայրաստիճան աղքատության մեջ՝ զրկված են ունեցվածքից եւ իրենց հպատակ գյուղացիներից: Ուստի, սպասում են Ձեր արդարամտությանը, քանի որ Նորին Մեծություն կայսեր անունից Դուք իրավունք ունեք զբաղվելու Ղարաբաղի մելիքների գործերով»[5]:

Նպատակ ունենալով այս հրապարակմամբ ընդգծել եւ փաստել Ղարաբաղի մահմեդական իշխանությունների կողմից հայ մելիքական տների ու հայ բնակչության հանդեպ սանձազերծած ահաբեկումները եւ ունեցվածքի բռնագրավումը, անկասկած է, որ այս ամենի արդյունքը պետք է լիներ վերջիններիս կողմից հայրենիքի հարկադրաբար լքումը: Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի կողմից հրատարակած վավերագրերը նման եզրահանգում կատարելու լիակատար իրավունք են տալիս. «...երբ պարսկական զորքերը մտան Երեւան, 300 հայ ընտանիքներ լքեցին Ղարաբաղը եւ հաստատվեցին Վրաստանում, որոնցից 80-90 ընտանիքներ Խաչենից էին եւ մեր հպատակներն էին: Ուստի, Ձերդ Բարեծնություն, ընդունեք մեզ Ձեր հովանավորության տակ եւ վերադարձրեք այդ ընտանիքները Խաչենի մելիք Աստվածատուր Դանիլովին, որի հորը անիրավորեն պատժեց Իբրահիմ խանը: Հանգուցյալ թագավոր Գեորգին, այդ մասին տեղեկանալով, մեզ տվել է գրավոր հաստատում»[6]:

Ամենահամեստ հաշվարկով անգամ Ղարաբաղից հեռացած հայ բնակչության թվաքանակը անցնում է 1500-2000-ի սահմանը: Հայկական տարրը անվիճելիորեն հայրենազրկվել է, ինչպես արդեն նշեցինք, մահմեդական իշխանության ահաբեկումների, բռնությունների ու սպառնալիքների հետեւանքով. ավելին՝ դա տեղահանություն էր բառի իրական իմաստով: Դրան հակառակ՝ մահմեդական տիրակալները, Փանահից սկսած, Ղարաբաղը «լցրել են» թուրք-մահմեդական տարրերով, որը չեն ժխտում անգամ իրենք՝ ադրբեջանցի պատմաբանները. «Փանահ խանի ձեռնարկած առաջին քայլերից մեկը եղավ թուրք-մահմեդական բնակչության վերադարձը հայրենի երկիր (ընդգծումը՝ Է. Հ.)... բնակիչների վերադարձը եւ նրանց տեղավորումն իրենց նախնիների ու հայրերի երկրում առավել ամրապնդեց Ղարաբաղի խանությունը: Վերադարձածների

---

[5] Անդ, էջ 639:

[6] ԱԿԱԿ.

մեջ էր նաեւ Ղարաբաղի ապագա խանը՝ 15-ամյա Իբրահիմ Խալիլը...»[7]:

Այդուհանդերձ, մեջբերենք Գանձասարի Սարգիս եպիսկոպոսի նամակի շարունակությունը, քանի որ այն բավականին բնութագրական է Ղարաբաղում տիրող իրավիճակը պատկերացնելու առումով. «Այս ամենից զատ, անհրաժեշտ եմ համարում տեղեկացնել Ձեզ, որ մելիք Ջումշուդը Վարանդայի մելիքն է եղել, մելիք Աբովը՝ Թալիշի, իսկ մենք Խաչենից ենք, մելիք Ադամ Մեջլումովը գտնվում է Գյանջայում, իսկ մելիք Աբաս Բախտամովը՝ Ղարաբաղում: Ղարաբաղից եկածների մեջ կան նաեւ նրա հպատակներից: Թախանձագին խնդրում եմ Ձեզ Վրաստանում գտնվող մելիքներին վերադարձնել իրենց հպատակներին, իսկ այն հպատակներին, որոնց մելիքներն այդտեղ չեն, եթե ձեր կամքին հակառակ չէ, տվեք մելիքներին, հուսով եմ, որ վերջիններս եւս կընդունեն ռուսական հպատակություն»[8]: Ասվածից մեկ եզրակացություն կարելի է կատարել՝ որքան անտանելի ու վտանգավոր է եղել Ղարաբաղի հայ մելիքների համար իրենց հարազատ օջախներում մնալը, որ այդպես թախանձագին խնդրել են ռուսական իշխանություններից հպատակություն եւ հովանավորություն:

Նշենք, որ վրաց ազնվականությունը գրկաբաց չի ընդունել Ղարաբաղի հայ մելիքներին: Ղարաբաղի մելիքներն իրենց նախաձեռնողականությամբ եւ քաջությամբ ոչ միայն չեն գիջել, այլեւ շատ հատկանիշներով գերազանցել են վրաց ազնվականներին, ուստի վերջիններս հայ մելիքների մեջ առաջին հերթին վտանգավոր մրցակիցներ էին տեսնում: Խնդիրը քաջ գիտակցում էր նաեւ ռուսական իշխանությունը: Սկզբնական շրջանում նշյալ խնդիրը փորձել են հարթել կայսերական հրամաններով. մեջ ենք բերում գեներալ Լազարեւի 1801 թ. հունիսի 7-ին վրացական կառավարությանն ուղղված նամակից մի հատված. «Ձնայած վրաց արքայորդիների կողմից Ղարաբաղի մելիքների հանդեպ հակառուսական տրամադրություն ստեղծելու փորձերին՝ Ղարաբաղի մելիք Ջումշուդի կողմից ինձ գրած խնդրանքը՝ իրեն հանձնել Գեորգի թագավորի կողմից նվիրաբերած Լոռի ամրոցը որոշ գյուղերի հետ միասին, պետք է բավարարել, ինչի համար առաջարկում եւ վրաց պատվելի կառավարությանը հորդորում եմ այդ խնդրով ընդունել համապատասխան որոշում...»[9]: Հավելենք նաեւ, որ վրացական արքունիքն էլ իր հերթին գի-

---

[7] "Карабах: Этимология, территория и границы", էլ. կայք՝ http://www.azerbaijan.az/portal/Karabakh/History/history_r.html.

[8] АКАК, т. 1, с. 639.

[9] АКАК, Документ 884. Отношение ген.-м. Лазарева к грузинскому Правительству. От 7-го июня 1801 года, за N 11, Тифлис, 1866, с. 639.

տակցում էր, որ Ղարաբաղի նախաձեռնող մելիքների մուտքը մեծապես կնպաստի երկրի տնտեսական հզորացմանը, ուստի աշխատում էին սիրաշահել հայ մելիքներին՝ նաեւ «ի կատար ածելով» ռուսաց թագավորի հանձնարարականը: Ասվածի ակնհայտ ապացույցն է 1800 թ. փետրվարի 29-ին վրաց թագավորի կողմից մելիք Ջումշուդին հատուկ շնորհագրի արժանացնելը. «Քանի որ դուք հեռացաք Շուշիի Իբրահիմ խանից դեպի մեր սահմանները՝ ընդմիշտ բնակության, մենք շնորհագիր ստացանք Ռուսաստանի Նորին Մեծություն տիրակալից՝ Ձեզ բնակեցնելու եւ կալվածք-հողատարածքներ հատկացնելու վերաբերյալ, ուստի, որպես մշտական կալվածք, ձեզ ենք հանձնում Լոռու ամրոցը եւ Լոռին իր հպատակների հետ միասին.... սակայն, քանի որ այդ տարածքները տվել էինք Շամիր աղային, եթե մահացած աղայի որդին կամ թոռը չներկայանան, այդ հողերը եւս Ձերը կլինեն: Սրանից բացի, ընդմիշտ տիրելու համար Ձեզ ենք շնորհում Ղարաբաղի ժողովրդին, որոնք ներկայումս ապրում են Դիզակում... անկեղծորեն ցանկանում ենք մեր ջանադիր աջակցությունը բերել Ձեզ... Ինչպես նաեւ մեր վեքիլ-վեզիրներին եւ մյուս պաշտոնյաներին հանձնարարել ենք ոչ միայն կատարել մեր կամքը, այլեւ բոլոր հնարավոր միջոցներով աջակցել Ձեզ»[10]*:*

Ուշագրավ է նաեւ, որ դեպքերից շատ չանցած, ժամանակին վրացական թագավորությունում հաստատված բազմաթիվ հայեր ցանկություն են հայտնել Ղարաբաղի մելիքների ենթակայության տակ անցնել. ինչպես հաստատում է գեներալ մայոր Լազարեւի՝ կառավարչապետ Կնորինգին 1800 թ. հոկտեմբերի 6-ին ուղղված զեկուցագիրը, մելիք Աբովը ռուսական կառավարությունից թույլտվություն էր խնդրում իրեն ենթակա տիրույթներում ընդունել Ախալցխայի օկրուգից թվով 1000 հայ ընտանիքների, «որոնք մտադրություն ունեն մելիք Աբովի մոտ անցնել...»[11]*: Այսինքն՝ ակնհայտ է մելիք Աբովի՝ տեղի հայությանը հուզող խնդիրների հանդեպ ունեցած դիրքորոշումը, թեպետ դա գեներալ Լազարեւին ամենեւին դուր չէր եկել. «Այս գործն ինձ շատ կասկածների տեղիք է տալիս...»*[12]*, - գրել է ռուս հրամանատարը:*

Գեներալ Լազարեւը կամա թե ակամա չէր կարող Կովկասի կառավարչապետից «թաքցնել» այն իրողությունը, որ հայ մելիքների՝ Վրաստան

---

[10] АКАК, Документ 877. Грамота Е. В. царя Грузинского мелику Джимшиду, от 29-го февраля 1800 года, с. 637.

[11] Անդ:

[12] АКАК, Документ 880. Рапорт ген.-м. Лазарева ген.-л. Кнорингу. От 12-ги января 1801 года, за N 25.

ժամանելը լուրջ խնդիրներ է առաջացրել բուն Ղարաբաղում. «Մելիքներ Ջումշուդը եւ Ֆրիդոնը, գտնվելով Նորին Մեծության հովանու ներքո, Ղարաբաղում բնակվող իրենց հպատակների հետ միասին... Վրաստանում հողեր են ստացել: Դրանց (բնակության իրավունք ստացածների մասին է՝ Է. Հ.) թվում է նաեւ մելիք Աբովը: Վերջինը, որ առավել քաջ է մյուսներից, մինչ օրս չի դադարում ընտանիքներ դուրս բերել Ղարաբաղից, որոնց մեջ են նաեւ մելիքներ Ֆրիդոնի եւ Ալավերդովի հպատակները: Սակայն մելիք Ֆրիդոնին, որ բոլորից համեստն է, այդ ամենը չի մտահոգում, իսկ մելիք Ալավերդովի քեռին՝ այստեղ գտնվող հայ եպիսկոպոսը, շարունակում է ահազանգել այդ մասին, թե ինչու է թագավորի կողմից թույլ տրվել տանել իրենց պատկանող ընտանիքները...»[13]*: Պնդել, թե մելիքների գործողությունները այս առնչությամբ միասնական են եղել, անշուշտ, սխալ է, թեպետ հասկանալի է նաեւ մելիք Աբովի այս ձեռնարկի իմաստը, այն է՝ Վրաստանում ստեղծել ամուր եւ հզոր հայկական օջախ:*

Սակայն, ինչպես եւ սպասելի էր, խնդրի առնչությամբ անմիջապես հետեւում է ռուսական արքունիքի կոշտ արձագանքը. արդեն Ալեքսանդր Ա.-ի օրոք՝ 1801 թ. մայիսի 17-ին, գեներալ Լազարեւի՝ մելիք Աբովին ուղղված նամակում գրված է. «Տեղեկացել եմ, որ Դուք, Ձեզ հետ վերցնելով հպատակներ, մեկնել եք Ախալցխա... շտապում եմ տեղեկացնել, որ այս ամենը հակասում է Նորին Մեծության չնորհագրին... խնդրում եմ այս նամակը ստանալուն պես վերադառնալ Ձեր տիրույթները եւ ներկայանալով ինձ՝ ապացուցել, որ մշտապես հնազանդ եք մեր տիրակալ-միապետին. եթե չկատարեք մեր պահանջը, ապա մենք դա կհամարենք ընդհանուր բարեկեցության դեմ ուղղված ոտնձգություն եւ անհնազանդություն մեր օրենքներին, որոնց Դուք պետք է մշտապես ապավինեք»[14]*:*

Խնդրի առնչությամբ մեր դիտարկումները բերում են նաեւ այն համոզման, որ վրաց արքունիքի հետ մելիք Աբովի հարաբերությունները այնքան էլ հարթ չեն ընթացել: Համենայն դեպս, Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի առաջին հատորում զետեղված է գեներալ Լազարեւի՝ կառավարչապետ Կնորինգին ուղղված զեկուցագիրը, որտեղ մասնավորապես ասվում էր. «Արքայորդի Դավիթը ինձ հասցեագրած իր երկու ուղերձներում տեղեկացնում է, որ մելիք Աբովն իր

---

[13] Անդ, էջ 638:

[14] АКАК, Документ 881. Письмо ген.-м. Лазарева к мелику Абову, от 17-го мая 1801 года, за N 254.

հպատակների հետ միասին հաճախակի հարձակումներ է գործում թուրքական տիրույթների վրա: Եվ որպեսզի մելիք Աբովին արգելվի կատարել այսպիսի անհաճո գործողություններ, ես նրան նամակ ուղարկեցի, որ ժամանի ինձ մոտ՝ բացատրություն տալու»[15]*:*

Վրաստանում ապաստանած հայ մելիքների հանդեպ անվստահության մթնոլորտն ավելի է խորանում Կովկասի նոր կառավարչապետ, ազգությամբ վրացի Պավել Ցիցիանովի օրոք: Վերջինիս բնավ դուր չի եկել Ղարաբաղի մելիքների այս անկախ վիճակը եւ ռուսաց թագավորի կողմից ցուցաբերվող բարեհաճությունը, ուստի ամեն գնով փորձել է նվազեցնել Ղարաբաղի հայ մելիքների դերակատարությունը տարածաշրջանային խնդիրների լուծման գործում: Այս դիրքորոշումն առավել ակնհայտ է դառնում, երբ հարց է առաջանում հավասարեցնել Ղարաբաղի մելիքների եւ վրաց իշխանների իրավունքները: Կովկասի կառավարչապետը հենց սկզբից ընդդիմանում է այս ձեռնարկմանը եւ Ալեքսանդր Ա.-ին ուղղված զեկույցում ներկայացնելով խնդրի առնչությամբ իր «բացատրությունները»՝ գրում է. «Վրաց եւ հայ իշխանների իրավունքների հավասարեցումը արդյո՞ք չի հակասում այս երկրամասի սովորույթներին... Նորաբնակ հայ իշխանները Ղարաբաղի մելիքներ են, եւ նրանց հարստությունը թագավորների կողմից հարգվել է, սակայն վրաց իշխանները, հատկապես ավագագույն սերնդի, երբեք նրանց նկատմամբ վստահություն եւ հարգանք չեն ունեցել, որի մասին համարձակվում եմ տեղեկացնել Նորին Բարեծնությանը. հայ եւ վրաց իշխանների իրավունքների հավասարեցումը վերջիններիս համար ամոթալի կլինի ինչպես նրանց ունեցած տեսակետների, այնպես եւ սովորույթների իմաստով, որոնք ինձ հայտնի են: Ավելին՝ ինչ վերաբերում է Սողոմոն Արղությանին, որը Մուսին-Պուշկինի կողմից բազմիցս պարգեւատրվել է վրաց իշխաններին հավասար թրով, սույն տարվա մարտի 12-ի իմ զեկուցագրում արդեն տեղեկացրել եմ, որ իշխան Արղությանն ամբարիշտ գտնվեց Հայոց կաթողիկոս Դանիելի հարցում եւ անցավ կեղծ կաթողիկոս Դավիթի կողմը...»[16]*: Նշենք նաեւ, որ Ղարաբաղի հայ մելիքների մասին նման ամբաստանագրեր Կովկասի կառավարչապետը հետագայում եւս գրել է, ինչը մեկ անգամ եւս հաստատում է Ղարաբաղի եւ առհասարակ հայ ժողովրդի հանդեպ նրա ունեցած ընդգծված բացասական վերաբերմունքը:*

---

[15] АКАК, Документ 882. Письмо ген.-м. Лазарева ген.-л. Кнорингу, от 20-го мая 1801 года, за N 258.

[16] АКАК, т. II, Документ 386. Всеподданиейший рапорт кн. Цицианова, от 20-го января 1804 года, N 2, Тифлис, 1868, с. 208.

Ղարաբաղի հայ մելիքների առնչությամբ Կովկասի կառավարչապետը հերթական անգամ «անկեղծանում է» 1804 թ. փետրվարի 24-ին կոմս Մուսին-Պուշկինին գրած զեկուցագրում. «Ինչ վերաբերում է իշխան Սողոմոն Արղության-Երկայնաբազուկին եւ մելիք Ջումշուդին երաշխավորություն տալուն, պատիվ ունեմ զեկուցելու Ձեզ, որ քաջ գիտենալով պատիվների ու շքանշանների հանդեպ Վրաց իշխանների ունեցած մեծ հակվածությունը... իմ կարծիքն այս է՝ առանց վիրավորելու հայ մելիքներին... այդուհանդերձ, նրանք իրենց իրավունքներով չեն կարող հավասարվել վրաց իշխաններին...»[17]: Ավելին՝ Ցիցիանովը, ամեն տեսակ խարդավանքներ գործադրելով, փորձում էր խանգարել Մելիք Ջումշուդի կողմից իրեն պատկանող Լոռու գավառի որոշ հողերի վաճառքը՝ պատճառաբանելով, թե վրաց Գեորգի թագավորը նրան այդ հողերը տվել է ոչ անժամկետ, եւ հայտնվել են այդ հողերի իրական սեփականատերերը՝ ի դեմս Շամիր աղայի թոռների»[18]: Խնդիրը տեղափոխվում է ռուսական արքունիք. գործին խառնվում է Ռուսաստանի ֆինանսների նախարար Ալեքսեյ Վասիլեւը: Համապատասխան քննություն անցկացնելուց հետո նախարարը Ցիցիանովին ուղղված զեկուցագրում պարտադրում է ճանաչել մելիք Ջումշուդի իրավունքը Լոռու գավառի հողերի հանդեպ, իսկ Վրաստանի լեռնային կառավարչությանը թույլատրում է հաստատել այդ հողերի վաճառքը[19]:

Այսպիսով, Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերը աներկբա հաստատում են պատմական այն իրողությունը, որ Ղարաբաղի մելիքները եւ նրանց հետ Վրաստան հեռացած հայ բնակչությունը հայրենի եզրերը լքել են բացառապես մահմեդական տիրակալների վարած հայահալած ու բիրտ քաղաքականության հետեւանքով: Այդուհանդերձ, հաստատվելով հարեւան Վրաստանում՝ Ղարաբաղի մելիքներն ու հայ բնակչությունը ոչ միայն տնտեսական վերելք ապահովեցին իրենց հատկացված տարածքներում, այլեւ նշանակալի ծառայություններ մատուցեցին ռուսական կառավարությանը՝ Անդրկովկասում ռուսական ներկայությունը եւ հետագա առաջխաղացումն ամրապնդելու ուղղությամբ:

---

[17] АКАК, Документ 388. Отношение кн. Цицианова к гр. Мусину-Пушкину, от 24-го февраля 1804 года, N 187, с. 210.

[18] Տես անդ, Документ 395. Всеподданиейший рапорт кн. Цицианова, от 30-го декабря 1804 года, N 62, էջ 212:

[19] Տես անդ, Документ 402. Предложение кн. Цицианова Гражданской Экспедиции, от 12-го августа 1805 года, N 907, էջ 214:

РЕЗЮМЕ

В конце XVIII века армянские мелики Карабаха со своими подданными крестьянами, подвергаясь гонениям со стороны местных магометанских правителей, обосновывались в соседней Грузии. Несмотря на то, что этот вопрос неоднократо рассматривался в армянской историографии, тем не менее, факт покидания армянскими меликами пределов родного Карабаха, ныне довольно сильно спекулируется азербайджанскими историками: утверждается, будто армянские мелики самовольно оставили территорию Карабаха, тем самым поддаваясь заманчивым предложениям русского правительства. Приведенные в статье документы извлеченные из собрания Кавказской арехеографической комиссии доказывают совсем обратное; историческими фактами обосновывается, что армянские мелики и находящиеся вместе с ними армянское население Карабаха покидали свои родные края исключительно и в первую очередь из-за жесткой и антиармянской политики магометанских правителей. Таким образом, имело место лишение своей родной отчизны (на арм. – հայրենազրկում). В статье доказывается также, что находясь в соседней Грузии, армянские мелики и крестьяне Карабаха не только развивали местную экономику, но и оказывали немаловажную поддержку русскому правительству в деле их дальнейшего укрепления в Грузии и в Южном Закавказье в целом..

SUMMARY

At the end of the 18th century, the Armenian meliks of Karabakh together with peasants subject to them, being persecuted by local Mohammedian rulers, settled down in neighboring Georgia. In spite of having been repeatedly considered in the Armenian historiography, the fact that the Armenian meliks left the borders of their native Karabakh is now heavily speculated by Azeri historians: it is alleged that Armenian meliks left the territory of Karabakh on their own, thus yielding to the enticing offers of the Russian government. The documents cited in the article, drawn from the collections of the Caucasian Archeographic Commission, prove quite the opposite: it is justified by historical facts that the Armenian meliks together with the Armenian population of Karabakh left their native lands exclusively and primarily because of the rigid and anti-Armenian policy of Mohammedian rulers. Thus, there happened a deprivation of the native land (in Armenian – հայրենազրկում). The article also proves that, while in neighboring Georgia, the Armenian meliks and peasants of Karabakh not only developed the local economy, but also provided important support to the Russian government in its further strengthening in Georgia and in the South Caucasus as a whole.